

Հ. ՆԵՐՍԵՍ Վ. ԱԿԻՆԵԱՆ  
1954ին

# ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 9-10

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԿԸ. ՏԱՐԻ 1954

## ՅՈՐԵԼԵԱՆ

50 ԱՄԵԱՅ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԹՈՒՆԷՈՒԹԵԱՆ

### Հ. ՆԵՐՍԵՍ Վ. ԱԿԻՆԵԱՆԻ

Մխիթարեան Միաբանութիւնը, ձայնակից Վիեննայի հայ Գաղութին եւ պիւրի Ազգայիններու, գնահատելով հայագիտական Ուսումնաթերթին, «Հանդէս Ամսօրեայ»-ի աշխատակցին եւ խմբագրապետին, Հ. Ներսէս Վ. Ակինեանի 50ամեայ գրական գործունէութիւնը պատմական, քանասիրական եւ մատենագրական մարզերու մէջ, կը տօնէ արդիւնաւոր Վաստակաւորին յորելեանը:

Յանցառ երեւոյթ է հայ կեանքին մէջ նման քանասէր դէմք մը, որ 50 տարիներ առանց ընդհատումի գործէ, վաստակի եւ արդիւնաւոր ըլլայ հայ մշակոյթի «լայծառութեան համար»:


Հայուն «փոքր ածուն», զոր մշակեց տրեսչան Բանասէրը, փշալից էր եւ առապար, քայց վաստակները — ձեռք բերուած քրտնաթոր ճակատով — հարուստ եւ շահեկան, որոնց ի տես կրնայ պարծիլ Ազգը. անոնք կը պսակեն Վաստակաւորին ճակատը անթառամ դափնիներով:

Ուրախ ենք աւետելու, որ Յորելեարին անունը արձագանգ գտած է նաեւ հայ շրջանէն դուրս. եւ Վիեննայի Համալսարանի ակադեմիական ծերակոյտը իբրեւ ցոյց իր գնահատանքին շնորհած է անոր «Դոկտոր ֆիլիսոփայութեան» պատուոյ տիտղոսը:

Յորելեանի հանդէսը որոշած էր Միաբանութիւնս կատարել Սեպտեմբեր 11ին: Բայց դժբախտ արկած մը, որ պատահեցաւ Յորելեարին Օգոստոս 13ին, հարկադրեց զմեզ տօնախմբութիւնը յետաձգել առաջիկայ ֆետրուարին, յուսով թէ մինչ այն կը գտնէ արկածեալն իր կատարեալ ապաքինումը յուրախութիւն ամէնուս:

Թէեւ կը յետաձգուի յորելեանի հանդէսը, քայց պատշաճ կը համարինք այժմէն հրատարակել Յորելեարին հասարակական գործունէութիւնն եւ տարուած աշխատանքին արդիւնքը կազմող գործերու ցուցակը:

Մտիւթարեան Մուսաբեկով



836-73